

ԹՈՒՐԳ ՄԱՄՈՒԼԸ

«Հէյաթ» նոր լրագիրը, վարչական մասինն եւ գոյնը:—Ուղղութեան պարզում.
«մահմեդականութիւնից դուրս փրկութիւն չկայ»:—Կորսե՛ն Թիւրքիայի դէմ ա-
պստանք արաբները. ինչո՞ւ դէմ ենք համիլտանութեան.—«Հէյաթ»-ի բռնածփիւրքը
հայ-քրական ընդհարումների խնդրում:

Յունիսի Չ, երեքշաբթիից սկսած՝ Բագում լոյս տեսաւ
Հէյաթ (Կեանք) անունով թուրք լրագիրը, որի շուրջը՝ հրա-
տարակուսութիւնից առաջ, բաւական աղմուկ բարձրացել էր ար-
դէն: Եւ այդ հասկանալի է, որովհետեւ նրանք, որոնք այսօր
«Հէյաթ»-ի գլուխն են անցել, վաղուց է ձգտում էին նոյն նպա-
տակին—ունենալ մի թուրքերէն օրգան աւելի մտերմօրէն, ա-
ւելի համարձակ խօսելու համար իրանց կրօնակիցների հետ: Եւ
դրա համար էլ նրանք ամեն ջանք գործ դրեցին, որպէսզի ձեռք
անցնեն «Շարքի-Ռուս»-ը, Շահթախթինսկիի լրագիրը: Բայց այդ
նրանց չյաջողուեց, որովհետեւ Շահթախթինսկի՝ վերջին բոպէին
մերժեց անձնատուր լինել, գուշակելով իր գլխին խաղացուելիք
խաղը: Այն ժամանակ Թաղիեվ, Աղայեվ, Թոփչիբաշեվ խմբա-
կը՝ ճարհատ՝ փորձեց մի նոր լրագրի արտօնութիւն ստանալ:
Պատմական ըրպէն և հանգամանքները նպաստաւոր էին: Թոփ-
չիբաշեվ՝ Պետերբուրգում ներկայացաւ Կովկասի Փոխարքայ
Կոմս-Վորոնցով-Դաշկովին և կարողացաւ «Հէյաթ»-ի թոյլտու-
թիւնն ստանալ:

Մեծածաւալ, մայրաքաղաքի լրագրների մեծութեամբ մի
լրագիր հրատարակել, և այն էլ ընթերցանութեան անընտել
մահմեդական հասարակութեան համար. դա չափազանց ծանր
գործ էր: Անհրաժեշտ էր մեծ զոհողութիւնների յօժար մի
հարուստ: Այդ հարուստը պատրաստ կար—բագուցի յայտնի
միլիօնատէր Զէյնէլ Արեդին Թաղիեվը: Մենք որքան որ էլ
անհամաձայն լինենք «Հէյաթ»-ի ուղղութեան, որքան որ էլ
չհամակրենք գործի ընաւորութեան, պէտք է խոստովանուենք
սակայն, որ թուրք միլիօնատէրը՝ խոշոր զոհարերութիւնների
իր պատրաստակամութեամբ շատ աւելի բարձր է կանգնում
մեր միլիօնատէրներից, որոնք իրանց անտարբերութեամբ դէ-

պի հայ գրականութիւնն ու լրագրութիւնը, հռչակաւոր են: Վրացի հարուստները՝ օրինակ Զուբալով՝ զոհողութիւններից չփախան վերակենդանացնելու համար իրանց լրագիրները, ինչպէս «Իվերիա»-ն, ահա միւսոյն դասը տալիս է և թուրք հարուստը, իսկ հայ կրեստսը՝ «Կուրտուրական» ցեղի այդ սնամէջ ծաղիկը՝ չի օժանդակում իր մայրենի գրականութեան, մամուլին:

Թաղիսի «Հէյաթ»-ի խմբագրութեան տրամագրութեան տակ է գրել և՛ իր սեփական ընակարանը՝ Նիկոլայեվսկի փողոցում, և՛ իր քսակը: Լրագրի ադոսնատէրը, պաշտօնական հրատարակիչն է, «Կասպի» խմբագիր Մէրզան բէգ Թոփչիբաշեւ: Խմբագիրները՝ երկուսն են՝ Ահմէդ բէգ Աղայեվ և Ալի բէգ Հուսէյն զադէ:

«Հէյաթ»-ը և՛ իր ծաւալով և՛ իր բովանդակութեամբ բաւական նպաստաւոր տպաւորութիւն է թողնում: Մեծ լրագրւորների բոլոր բաժիններն ունի և ինչ որ գլխաւորն է՝ աշխատում է իր ընթերցողներին տեղեակ պահել մահմեդական ամբողջ աշխարհի իրողութիւններին և երևոյթներին. նա մի տեսակ կապ է Կովկասի և ուրիշ երկրների մահմեդականների միջև: Իսկ այս հետաքրքիր հրատարակութիւնը զարմանալի կերպով էժան է. 1 ամսուայ բաժանորդակինն է 80 կոպէկ, ամբողջ տարուանը միայն 6 ռուբլի: Օտար քաղաքների համար 6 ռ. 50 կ., իսկ արտասահմանի համար 10 ռուբլի: Մենք դատմամբ առաջ բերինք այս թուերը, որպէս ցոյց տանք թէ մահմեդականները՝ թէպէտև ուշ սկսած՝ ճրքան աւելի փորձառութեամբ և խելօքութեամբ են գործում. նրանք գիտն, որ թերթը տարածելու լաւագոյն միջոցը ոչ միայն ճիշտ բովանդակութեամբ հրապարակ հանելն է, այլ և էժան գին նշանակելը: Եւ դատելով մեր ստացած հաստատ տեղեկութիւններից, հրատարակիչները հասել են արդէն իրանց նպատակին: «Հէյաթ»-ը տարածւում է այնքան յաջողութեամբ, որ նրա առաջին համարները բոլորովին սպառուած են:

Որպէսզի «Հէյաթ»-ի մասին մեր տուած տեղեկութիւնները կատարեալ լինին, աւելացնենք նոյնպէս, որ թուրք լրագրի զրաքննիչը՝ թուրք է. նազվորնըյ սովէտնիկ Ասաֆ բէգ Աթամալի բէգով: Ինչ վերաբերում է նրա ուղղութեան, «Հէյաթ»-ը պարզապէս համիսլամական գոյն է կրում. և արդէն նրա ճակատին տպագրուած է. «Թիւրքը ջէրիդէյի իսլամիէ», «Թուրքերէն իսլամական լրագիր»:

«Հէյաթ»-ը նեղ ազգայնական, աւելի ճիշտ՝ կրօնական հողի վրայ է կանգնած: Յայտնի է թէ ճրքան խորը տգիտութեան մէջ է գտնուում մահմեդական հասարակութիւնը. արդ,

այդ անգիտակից, մութ բնագղներով գործող հասարակութիւնը նոր կեանքի պատրաստելու համար անհրաժեշտ է ոչ թէ նացիօնալիստական, կրօնական բարոյ, այլ զուտ մարդկայնական, բաղադրակրթական յորդոր: Իսկ «Հէյաթ»-ի վարիչները անդադար կրկնում են, որ նրանք թուրք են և թուրք էլ պիտի մնան, թէ մահմեդականութիւնից դուրս իրանց համար փրկութիւն չկայ: Ի հարկէ մենք թուրքերի հետ միանգամայն համաձայն ենք, որ ամեն ցեղ, ամեն ազգ պէտք է անադարտ պահէ իր առանձնայատկութիւնները, իր լիզուն, գուցէ և իր կրօնը: Բայց «Հէյաթ»-ը իր հրապարակախօսութեան հիմքը չէ դնում մաքուր ազգայնութեան հողի վրայ, այլ նացիօնալիզմի, այսինքն յարձակողական ազգասիրութեան ճահճի մէջ:

* *

Սկսենք № 1-ից: «Հէյաթ»-ի անդրանիկ համարում Աղայիվը տպել է նախ մի շնորհակալութեան արտայայտութիւն ուղղուած Կովկասի Փոխարքայ, Կոստ Վորոնցով-Դաշկովի՝ «որ դեռ ևս Պետերբուրգում եղած միջոցին, լրագրի մասին թոյլտուութիւն խնդրելու ժամանակ, մասնաւորապէս դէպի մահմեդականները ունեցած իր բարձր սիրոյն ապացոյցը տուեց, և նրանց փրկութեան մի ուղի և առաջադիմութեան մի ճանապարհ բաց անելու նպատակով՝ խնդրագրի հետ ծանօթացած րոպէում, առանց յապաղման՝ լրագրի արտօնութիւն շնորհեց և ի վաղուց հետէ այս տեսակ գործերում ընդունուած կարգի հակառակ, անմիջապէս հաստատեց լրագրի տնօրէնն ու խմբագիրը և այլն...»:

Այնուհետև դալիս է մի ցաւակցական կարճ դրութիւն, ուր լրագրի վարչութիւնն ողբում, կոծում է, որ «Հէյաթ»-ը հրատարակում է մի այնպիսի «ցաւալի» ժամանակ, երբ հայ և թուրք իրար արբին են խմում: Մենք ընթերցող, կոկորդիլոսեան այս տեսակ արցունքների յաճախ կը պատահենք, այնպէս որ շատ չզարմանանք «Հէյաթ»-ի այս մեղրբամատիկ դիրքից: Լրագրի վարչութիւնը ողբում է, որ «մասնաւորապէս մարդասէր դարձած, դարերից ի վեր համերաշխութեամբ, միութեամբ և դրացնութեամբ ապրող մահմեդական և հայ ժողովուրդների միջև, մի անբնական հակառակութիւն ծագեց. Բագուի, Նախիջևանի և Երևանի դէպքերը ամենուս մէջքը կոտրեց, աչքերը արցունքով, սիրտը արիւնով լցրեց, հոգիները վառեց և ամբողջ Կովկասը սուգի մէջ ընկղմեց և այլն...»

Լաւ, բայց միթէ «Հէյաթ»-ի խմբագրապետ Աղայիվը չէր, որ սրանից առաջ, ինչպէս յիշում են մեր ընթերցողները, ողբում էր որ մահմեդականները իբրեւ թէ զրկուել են «ցաւի»:

առաքինութիւնից, որ նրանք իրանց «գալի ընաւորութիւնը» կողոյրել են և մտել են «գառնուկի մորթի» մէջ:

Բայց անցնենք... Յաջորդ յօդուածը նուիրուած է լրագրի ուղղութեան: Յօդուածի առաջին մասում շեշտուած է լրագրի կարեւորութեան վրայ, ցոյց է տրուում թէ՛ ճրքան մեծ պահանջ է ներկայացնում նա քաղաքակիրթ ժողովուրդների համար: Սակայն լրագրի խօսքը նոր լսող, նրա ինչ լինելու մասին տեղեկութիւն չունեցող մահմեդականների մէջ այն տարօրինակ կարծիքն է տիրում, թէ ամեն լրագիր օգտակար է: Բայց ո՞չ՝ լրագիրն էլ կարող է, նայելով իր հետեւած ուղղութեան՝ փաստակար լինել իր ընթերցողների համար, ինչպէս անփիօնը՝ նրա մոլիների համար: Հետեւաբար, ընթերցողը մի լրագրից ըստ կարելոյն օգտուելու համար, պէտք է նախ ծանօթանայ նրա ուղղութեան հետ:

«Մեր ուղղութիւնը շարունակում է «Հէյաթ»-ի խմբագրութիւնը, ինչպէս մեր լրագրի անունն իսկ վկայում է, (հէյաթ-կեանք) կեանքի իսկական նշանակութեան ծառայել է. իսկ կեանքը՝ բարոյապէս, իմացականապէս և նիւթապէս մի շարժում է, որ ձգտում է կատարելագործութեան: Այդպէս է՝ ինչպէս մի անհատի, այնպէս էլ մի հասարակութեան, մի ազգի և անգամ մարդկութեան համար: Գալով մեզ՝ աստուածային շնորհով իսլամութեամբ փառաւորուած, երկրագնդի մեծագոյն մասը գրաւող մեր ազգին, անկասկած հզօր, բաղդաւոր, կեանքի բոլոր ձիրքերովը օժտուած մի ազգ ենք. նոյնիսկ նոր, երիտասարդ մի ազգ, որ կեանքի կատարելագործութեան ուղու առաջին հանգրուանումն է: Տարիքը առած շրջանում չէ, որպէսզի ծերութեան, թշուառութեան մօտեցած լինի:

«Անհրաժեշտ է որ այդ բանը իմանանք. Աստուծով, յառաջիկային այս բոլորը առանձին յօդուածներով կը ջանանք ցոյց տալ: Այստեղ ուզում ենք միայն այն յայտնել, որ արդէն կենտոնակ մեր ազգին կեանք տալ չի յաւակնում մեր լրագիրը, այլ ցանկանում է, իբրև հայելի, այդ կեանքը ցոլացնել: Սակայն սրանով հանդերձ, մեր լրագիրը կեանքի իսկական նշանակութեան, նրա հանգամանքներին և պայմաններին քաջածանօթ՝ մեր ազգի հասարակական կեանքի ուղղեցոյցը լինելով՝ կը փափաքի, ներսից կամ դրսից, ամեն տեսակ առաջադիմութեան և կատարելագործման արգելք և խոչընդոտ հանդիսացողների դէմ կուռել: Միւս կողմից յայտնի է, որ աշխարհն ու կեանքը կռուի մի դաշտ է. բոլոր կենդանի էակները շարունակ միմիանց դէմ մրցման, մաքառման մէջ են: Մեր լրագրի իսկական պարտականութիւնը հէնց այս բա-

նույն է. իր պարտքն է մեր ազգը գրչով պաշտպանել և այս մասին ջանք չխնայել: Մակայն ուրիշ ազգերի հետ մրցելով՝ մեր գոյութիւնը պահպանելու համար, նախ և առաջ պէտք է իմանանք մեր յետ մնացած լինելու պատճառները: Արդարեւ ի՞նչ է պատճառը, որ բոլոր թուրքերը, մահմեդական ամբողջ աշխարհը, բաղդատմամբ ուրիշ քաղաքակիրթ ազգերի, այնքան յետ է մնացել այսօր: Այս հարցի մասին առաջիկայում անհողմնակութեամբ, անաչառութեամբ և աներկիւղ խօսել պարտք էր համարենք... Մեր ուղղութիւնը՝ ներկայումս գոյութիւն ունեցող օրէնքների և կանոնների շրջանակում, կանոնաւորապէս և աստիճանաբար առաջադիմելու ծառայելը անհրաժեշտ էր դարձնէ:

Ընւ որովհետեւ մենք առաջադիմութեան ենք ձգտում, կասկած չկայ, որ մեր աշխց ու ձախից դժուարութիւններ գլուխ պիտի բարձրացնեն. աշխց՝ պահպանողականների խումբը, որ ամեն նորութեան հակառակ է և ձախից՝ այն խումբը, որ կուրօրէն մեր մրցակիցներն ընդօրինակելով՝ ուզում է յանկարծ ուստումներ գործել և իրան նետել երկիւղալի վիհերը: Առաջինները իսլամական աստուածայայտ կրօնի հոգուն անտեղեակ, փափագում են իրանց սեփական հաճոյքին ու ցանկութեան համապատասխան մի դրութեան մէջ մնալ: Իսկ երկրորդները կարծում են, որ իսլամութեան մէջ, քաղաքակրթութեան և առաջադիմութեան ծառայող ոչինչ չկայ, եւրոպայից փչող բոլոր հովերը, նոյնիսկ թունաւոր հովերը փրկարար են... Իսկ մենք թիւրք, մահմեդական՝ բայց ռուսահպատակ լինելով՝ կուզենք թրքութեան և իսլամութեան շրջանակում և ռուս կառավարութեան օրէնքների համաձայն առաջադիմել. մենք էր փափագենք որ մեր առաջադիմութիւնը տեսնելով՝ ասեն. ռուսահպատակ թուրք և մահմեդականները ի՞նչ գեղեցիկ առաջադիմում են, և ոչ թէ՛ թուրքերն ու մահմեդականները հաւատափոխ են լինում, եւրոպականանում են (Ֆրէնկլէշիօրլար), ասեն:

«Թուրքին հաւատափոխ լինելով եւրոպականանալը՝ Ֆրէնկլաների կամ հաւատափոխների, ուրացողների առաջադիմութիւնն է նշանակում և ոչ թէ՛ թուրքին, մահմեդականին առաջադիմութիւնը... Սրա համար, աշխարհի ամեն կողմը գտնուող և մեր բարեացակամութիւնը վայլող մեր կրօնակից եղբայրների առաջադիմութիւնը սրտով և հոգով պիտի ծափահարենք: Թուրք ենք, հետեւաբար, թուրքի ամեն տեղ առաջադիմելով և կատարելագործուելով երջանկանալը էր ցանկանք: Ռուսահպատակներ ենք, հետեւաբար, մեր ռուս հայրենակիցների բաղդատութեան և հանգստութեան փափագող ենք... Մի խօսքով՝ մեր

կրած երեք ստորոգելիքները—խլամ, թուրք և ուսանալատակ —մեզ մղում են բարի կամենալ բոլոր իսլամներին, թուրքերին և ուսն հասարակութեան:

Վերադառնալով չհեռանալով. վերևում ասացինք, որ մեր նպատակն էր կենսաբի իսկական նպատակին ծառայել: Արդեօք մեր ուղղութիւնը, մեր նպատակը իսլամական կրօնին համապատասխանում է. արդեօք իսլամը կենսաբի վրայ ի՞նչ աչքով է նայում, արդեօք կենսաբի անկարևոր է նկատում: Ո՛չ, հէ: Առանց աշխարհի, յաւիտեանականութիւն չկայ, առանց յաւիտեանականութեան աշխարհ չկայ... Ո՛վ ընթերցող, մահմեդականութեան հիմնաքարը՝ Ղուրանը՝ եթէ ուղադրութեամբ, հասկանալով կարդաս, կը տեսնես, որ կենսաբը՝ աստուածային մեծագոյն շնորհներէ մին է հաշոււմ. այդ շնորհին կարևորութիւնն չտալ, նըշանակում է աստուածային շնորհի դէմ հայնոյել: Կենսաբի գըլխաւոր նպատակներէ մէկն է կատարելագործութիւնը: Ուստի մենք պէտք է ձգտենք նախ մեր հասարակութեան մեծամասնութեան մէջ ընդհանուր կըթութեան տարածումին ու զարգացումին: Բայց որ կըթութեան Ղուրանի հաղիաներէ մէկն ասում է, թէ այն ժողովուրդը, այն ազգը միայն կարող է փրկութեան շաւղի մէջ լինել, որ գիտակից է, այսինքն ամեն ազգ, ամեն ժողովուրդ պէտք է իր ազգութեան, իր լեզուին, կրօնին, պատմութեան, բարքերին և սովորութիւններին և մի խօսքով իր անցեալին և ներկային և մինչև իսկ իր ապագային ծանօթ լինի: Հետեաբար «Հէյաթ»-ը իսլամական ազգերի և մասնաւորապէս թուրք ժողովուրդի մասին տեղեկութիւններ պիտի տայ, ըստ կարելոյն պիտի բացատրէ թէ նրանք ի՞նչ են եղել, ի՞նչ են և ի՞նչ պիտի լինեն, և պիտի ջանայ այդ ուղղութեամբ՝ թուրքերի քաղաքական, պատմական և գրական կենսաբի մասին հրատարակութիւններ անել:

«Որպէսզի կըթութիւնը մի ազգի ընդհանրութեան մէջ ծաւալի, պէտք է որ նրա մայրենի լեզուով լինի: Մի ժամանակ, Արևելքում, իսլամ ազգութեան ուսման և կըթութեան գործիքը արաբ և պարսիկ լեզուներն եղած լինելով՝ արաբ և պարսիկ ժողովուրդները մեծ առաջադիմութիւն կատարել են: Իսկ, այսօր, գիտութիւնը և գրականութիւնը՝ թուրք լեզուով կատարուելով՝ առաջադիմելուն համար, ամբողջ Արևելքում գիտութեան, զարգացումի ամենագեղեցիկ տարածիչը թուրք լեզուն է դարձել: Մենք էլ այդ լեզուով, որը պարունակում է իր մէջ բազմաթիւ պահանջուած յատկութիւնները, պիտի բացատրենք թէ ի՞նչ է իսկապէս Մոհամմէդի աստուածայայտ կրօնը:

«Վերջապէս, մեր խօսքերն ամփոփելով ասենք, որ եթէ

ցանկանում ենք առաջագիմելով՝ իրաւամբ կենսունակ մի ազգ լինել, անհրաժեշտ է որ մենք ամեն բանից առաջ մահմեդական քննարկ և մեր կենսասէր, առաջագիմասէր բոլոր ջանքերը գործ դնենք իսլամական օրէնքների համեմատ: Մեզ համար մահմեդականութիւնից դուրս փրկութիւն չկայ: Այս բանը անցեալում, մեր կռապաշտ և կրակապաշտ նախնիքները լաւ ըմբռնելով է որ մահմեդական կրօնը ընդունել և նրան տարածելով փառաւորուել են... Իսլամական փիլիսոփայութեան տեղեակ լինելու ենք և նրանից օգտուելու, նրա լոյսով լուսաւորուելու համար, և եթէ մեր առաջ արգելքներ յարուցուին, ճիգ գործ դնելու ենք այդ արգելքները բառնալու:»

«Հէյաթ»-ը վերջացնում է յօդուածը կոչ անելով մահմեդականներին, որ իրան ամեն կերպ աջակցին և խնդրում Ալլահից, որ իր շնորհները բաշխէ և իսլամ «ազնուական ազգը» իր հոգևոր պաշտպանութիւնից չզրկէ:

Յետոյ գալիս են այլևայլ լուրեր, «Հէյաթ»-ի բացման հանդիսի ժամանակ Թաղիեվի և խմբագիրների կողմից Կովկասի Փոխարքային և Սուլթան Կրիմ-Գիլէյին ուղարկուած հեռագրների պատճէները: Նոյն համարում կարդում ենք Աղայեվի ստորագրութեամբ մի շարունակելի յօդուած Ռուսաստանի վերջին անցքերի մասին: Յետոյ «Ներկանից լուրեր» վերնագրի տակ առաջ բերուած են «Նովոյէ Օբոզրենիէից» և «Մշակից» քաղուածքներ: Առաջին լրագրից բերուած քաղուածքի առիթով «Հէյաթ»-ի խմբագրութիւնը աւելացնում է.

«Նովոյէ Օբոզրենիէ հայ լրագիրը վերոյիշեալ լուրերը սուտ ու իրաւ հաղորդելով աշխատում է հասկացնել մահմեդականներին «համիւլամութեան» գաղափարի վնասակար հետեանքները, և նրանց աչքը բանալ. թէև նա յաւակնում է մահմեդականների ուսուցիչը լինել, բայց թող իր սեփական աչքի մէջ նայի և իր աչքի գերանը տեսնէ: Սակայն, որպէսզի խորհդատուի և ուսուցչի ասածը ազդեցութիւն գործէ, պէտք է որ նա անկեղծ լինի: Այդ յատկութիւնը «Նովոյէ Օբոզրենիէից» պահանջելու իրաւունք չունինք, բայց այս հարցը տալու իրաւունք ունինք. հազար տարիից իվեր եղբայրաբար ապրող երկու ժողովրդի միջև միտքը ապշեցնող, սիրտը արիւնով լեցնող և ամբողջ Կովկասը դժոխքի փոխող վայրենի արարքների պատճառը արդեօք «համիւլամութիւն» գաղափարն է, թէ «Նովոյէ Օբոզրենիէ»-ի և նրա նման լրագիրների կուրօրէն, տարիներով շարունակած ուղղութիւնը:»

Այնուհետև գալիս են մի շարք յօդուածներ, Կովկասի ներկայ դրութեան մասին, հասարակական հարցերի մասին,

արտաքին լուրեր, բանասիրական կայլն, Ինչպէս ասացինք «Հէյաթ»-ի բովանդակութիւնը ճոխ է:

Երկրորդ համարը սպառուած լինելու պատճառով մենք ձեռք չկարողացանք ձգել:

*
*
*

№ 3-րդում, հեռագրներից անմիջապէս յետոյ տպուած է արարների հասցէին վերին աստիճանի հայհոյական, մի ապշեցուցիչ յօդուած «Արարիայի Խառնակութիւնը» վերնագրով: Մենք այդ յօդուածը որակում ենք ապշեցուցիչ ածականով, որովհետեւ նա կրում է Աղայեվի ստորագրութիւնը, այն Աղայեվի, որ շարունակ արարների անունով էր երդւում, որ մահմեդական քաղաքակրթութեան փառքն ու պարծանքն էր հռչակում արարներին: Բայց ի՞նչու, պիտի հարցնէ ընթերցողը, Աղայեվ քարկոծում է այն՝ ինչ որ պաշտում էր առաջ: Որովհետեւ արարները դժբաղդութիւնն ունեն Սուլթանի, Վոսփորի փերում նստող սարսափի լուծը թեթեւ չգտնելու, որովհետեւ նրանք, Համիդի օրէ օր աւելի մոլեգնող հարստահարութիւններին հանդուրժելու անկարող, գլուխ են բարձրացրել: Եւ Աղայեվ որ քաղաքակրթութեան, մարդկայնութեան անունով է խօսում, հարստահարողները իր ոտքի տակն է առնում, հարստահարողին ձեռք երկարելու համար:

«Արարները հայհոյանքից էլ վատթար են—ասում է սըրբազան խօսքը: Այս աստուածային խօսքը ցոյց է տալիս, թէ արարների վաւրն ու բարքը, գործերը թր աստիճան հակառակ են ողջամտութեան: Հազար երեք հարիւր տարի առաջ այսպէս ընտրողւած՝ այդ երկար ու ձիգ ժամանակամիջոցում քանի՞ քանի՞ անդամներ փորձուած են նրանք: Իսլամական փայլը ջրնջողը, նրա պատմութեան էջերը արիւնով ներկողը՝ արարների հէնց այս բաշխողութիւնը, նրանց այս վաւրն ու բարքը և գործերն են եղել:

«Մեր մարգարէի սուրբ մարմինը դեռ ևս չէր սառել, որ արարների ազնիւ վարմունքը երևան գալով՝ մահմեդականութիւնը վտանգի ենթարկեց: Սակայն, շնորհիւ իսլամական սիւնների, արարութիւնից ազատ և իսլամութեան ընտելացած գթառատ, մեծ անձերի ջանք ու աշխատանքի, այս անդամ վտանգը հեռացրուեց, իսլամը ազատուեց:»

Վերջապէս արարը, Աղայեվի հաստատելով իսլամի փառքի և մեծութեան գերեզմանն է դառնում:

«Զօրքի և պիտերի միջև ազգայնական և ցեղական գժտութիւններ, թշնամութիւններ սերմանելով միութիւնն ու համընդհանրութիւնը խանդարեցին: Միացած երկիրն ու պետութիւնը

պատառ պատառ լինելով՝ տկարութիւնն ու վատուժութիւնը իսլամութեան ամբողջ մարմինը վարակեց: Հաւատք, կրօն, մի խօսքով ամեն սրբութիւն զոհուեց... Դարձեալ կրկնում եմ, այս բոլորի պատճառը եղաւ հէնց արաբների խառնակիչ, դաւաճան ոգին: Դրա համար էլ Աստուծոյ բարկութեան ենթարկուեցին. սկսեցին հետզհետէ տկարանալ, նուազել: Նրանց փառայեղ, հոյակապ պետութիւնը, շէն երկիրը քար ու քանդ լինելով աւերակ դարձաւ: Կամաց կամաց իրանք էլ իրանց նախկին խաւար օրերի բարբարոսութեան մէջ ընկղմուեցին:

«Այսօր նրանք նոյնն են, ինչ որ անցեալում: Ամեն օր, ամեն րոպէ նրանք իսլամի տունը աւերակ են դարձնում:

— «Մէկկայի շէրիֆի՝ ուխտաւորների վերաբերմամբ բռնած վարմունքի և Եգիպտոսի ուխտաւորների, այսինքն դարձեալ հէնց նոյն արաբների՝ Անգլիային դանդատուելով, դարձեալ իսլամութիւնը մի վտանգաւոր փորձանքի մէջ դրած լինելու մասին ժամանակ առաջ գրել էինք: Այժմ հեռագիրները Արաբիայից նոր, այնպիսի լուրեր են բերում, որ ամեն մարդու զարմանք կարող է պատճառել:

«Արաբիայի արաբները օսմանեան կառավարութեան դէմ ապստամբուելով՝ ապստամբական այլևայլ արարքներով զրադուած են: Ի՞նչ է սակայն այս ապստամբութեան պատճառը: Արաբները սնկախութիւն, ազատութիւն, բարենորոգութիւններ են պահանջում: Ո՛չ, ամենևին ո՛չ: Նրանց բարբարոսութիւնը այս տեսակ խնդիրքներից հեռու է: Միայն մի քանի շէյխեր՝ Անգլիայի և Ֆրանսիայի գրգռումներից զրդուած՝ ժողովուրդը օսմանեան թիւրքերի դէմ ոտքի են հանում: Բ. Դուռը խառնակութեան առաջն առնելու համար ստիպողաբար և բռնի Արաբիա զօրք է ուղարկում. արաբների ապստամբութիւնը զսպելու համար ժամանակ և փող պիտի վատնուի:

«Կասկած անգամ չի կարող լինել որ թիւրքերը՝ արաբներին խելքի պիտի բերեն, հնազանդութեան և լուծեան պիտի ստիպեն. արաբները ո՛չ այն վիճակը և ո՛չ էլ այն շնորքը ունեն, որ օսմանցիների նման մի պետութեան դէմ կռուեն: Այնուամենայնիւ արաբների այս ընթացքը օսմանեան կառավարութեան դէմ մի մեծ դաւաճանութիւն, մի մեծ ապստամբութիւն պիտի համարուի: Եւ օսմանցիները նրանց հետ սաստիկ խստութեամբ և զայրոյթով պիտի վարուեն: Որովհետեւ օսմանեան պետութիւնը այս բոպէին ուրիշ վտանգաւոր, երկիւղալի խնդիրներով զրադուած է: Մի կողմից եւրոպական պետութիւնների՝ օսմանցիների դէմ դաւաճան վարմունքը և միւս կողմից այդ վարմունքի շնորհիւ սնանուելով երևան եկող

քրիստոնեայ հպատակների ապստամբութիւնը թիւրք ազգը շարունակ տատանուող դրութեան մէջ են պահում: Եւ այսպէս պետութեան և ազգի ներքին գործերը ուղղելու և կանոնաւորելու ոչ պատեհութիւն և ոչ ժամանակ է մնում: Ներկայումս Բալկանեան թերակղզին և այնտեղ տեղի ունեցող խառնակութիւնները կառավարութեան նմանող ժամանակը գրաւում են: Այս հանգամանքներում նոյնիսկ մի իսլամ ժողովուրդը կառավարութեան նոր մտատանջութիւններ և դժուարութիւններ է պատճառում: Օսմանցին, ուրեմն ի՞նչ խստութեամբ և զայրոյթով պիտի վարուի արաբների հետ:

«Այսպէս է, այո՛. մահմեդականները ընդհանրապէս այն տեսակ ընթացք են բռնում, որ իրանց ձեռքով իրանց տունն են քանդում: Արաբները՝ սերունդից սերունդ՝ իրանց խառնակիչ, վատ բնաւորութեամբ, իրանց տգիտութեամբ և բարբարոսութեամբ, ստորութեամբ և խայտառակութեամբ, անգլիացիների և ֆրանսիացիների ձեռքում գործիք դարձած՝ մի ահագին իսլամ պետութեան աւերումին պատճառ լինելու վրայ են: Մահմեդական բոլոր ազգերի նուիրական սրբավայրերը՝ Մէկկէի, Քեարէի, Մէղկէի, Քերէլայի, Նէշէֆի նման վայրերը անգլիացիների և ֆրանսիացիների ձեռքը ձգելու են աշխատում: Որովհետեւ յիշեալ ֆրանսիացի և անգլիացիները այժմեանից լաւ հասկանում են, որ եթէ Բաղդադի և Հիշադի գծերը վերջանան, օսմանեան վիլայէթները՝ շուրհիւ երկաթուղիների իրար հետ յարաբերութեան մէջ կը մտնեն, կը շաղկապուեն, ոչ իսլամ վիլայէթների հետ ևս կրօնական և նիւթական կապը կուժեղացնեն և իսլամ ազգերը վերանորոգուելով՝ այլևս ուրիշների ձեռքում ծաղրի և այլևայլ խաղերի գործիք չեն դառնայ: Իսկ այդ բանը, ապագայում, եւրոպացիների զանազան հոգեւոր եւ նիւթական փորձանքների ննթարկուելուն պատճառ պիտի լինի, անկասկած: Դրա համար է որ եւրոպացիները այժմեանից այդ կարգի վտանգների առաջն առնելու նպատակով ամեն տեսակ միջոցների դիմում են, այդ միջոցներից է, մեր խառնակիչ ու նենգաւոր բարբերից օգտուել և մեզ՝ մեր սեփական ձեռքով՝ ոչնչացնել: Մեր տգիտութիւնը, անհամաձայնութիւնը, անմիաբանութիւնը եւրոպացիների ձեռքում մեծ, թնդանօթից, հրացանից աւելի ազդու գործիքներ են իսլամի տունը աւերելու համար...»

«Հէյաթը» զայրանում էր, երբ «Ն. Օրողընիէ» լրագիրը համիլաւութեան մասին էր ակնարկում: Աղայեկի այս յօդուածից յետոյ, ձր քիչ ու շատ խելքը գլխին մարդը կարող է պնդել թէ համիլաւական գաղափարը մահմեդականների մէջ դո-

յուրիւն չունի, որնէ դեր չի խաղում: Ընդհակառակը՝ արեւի նման պայծառ է, որ գոնէ Բագուի մահմեդական ինտելիգենցիայի իւրաքանչիւր անդամի հոգու խորքում մի տաճար կայ Արդ-իւլ-Համիդի և նրա իշխանութեան նուիրուած: Մահմեդականները երազն է տեսնել՝ Հնդկաստանից մինչև Եգիպտոս, կարմիր սուլթանի առաջ ծնկաչոք:

Սրանից մի քանի ամիս առաջ, Կահիրէի գլխաւոր թիւրք օրգանի խմբագիր, Մուսթաֆա Քամիլ փաշա, «La Revue»-ում տպում էր մի յօդուած, ուր համարձակ յայտարարում էր, թէ Մուլթանի բռնապետութիւնը ամեն մահմեդականի համար նուիրական է, խալիֆայի դէմ ամեն ցոյց մահմեդականների կողմից՝ իբրև դաւաճանութիւն, խստութեամբ կը դատապարտուի: Եւ արաբների ապստամբութեան մասին խօսելով գրում էր. «Ես չեմ կարող նկարագրել թէ մահմեդականների մեծամասնութիւնը որ աստիճան ատում է, իր հոգու խորքից, Արաբիայի այն դաւաճաններին, որ...»

Այդ միւնոյն դիրքն է բռնում արաբների վերաբերմամբ մեր Բագուի Աղայիվ բէգը: Համիւլամութիւնը նրա հաւատքի հանդադանակն է: Ի հարկէ, ընթերցող, եթէ այդ գաղափարը լինէր մի առաջադիմական գաղափար, եթէ մահմեդականները համիւլամութեան միտքը դարձնէին մարդկայնութեան, ազնիւ ձգտումների, քաղաքակրթութեան մի լծակ, մենք ինքներս նրանց ընդառաջ կը գնայինք և նրանց կասէինք բրավօ, կռուեցէք արդար դատի համար: Մենք որ համաշխարհային եղբայրութեան ու ազգերի համերաշխ գործակցութեան ջերմեռանդ ու անսասան հաստատեցեալներն ենք, մենք՝ որ մեր ամբողջ հոգով կանչում ենք սիրոյ, գթութեան, ներդաշնակ կեանքի, հասարակական արդար կազմակերպութեան ցանկալի թուականը, միթէ՞ մենք պիտի դժգոհէինք, հակառակէինք, որ որոշ կապով—լինի դա թէ՛ կուղ կրօնքի երկրորդական խախուռ կապը—միացած ժողովուրդներ իրար աւելի մօտենային, աւելի լաւ հասկանային, և ձեռք ձեռքի գործէին: Դա կը լինէր ոչ միայն մեր փափայած իդէալի, այլ և մեր սեփական տրամաբանութեան դէմ մեղանչում: Բայց, դժբաղդաբար, ինչպէս տեսնում էք, Աղայիվների համիւլամութիւնը չէ հիմնուած եղբայրութեան վրայ, նա չէ քարոզում արդարութեան, իրաւունքի պաշտամունքը, նա չէ ձայնակցում հարստահարուածի, ընկճուածի, մի ոճրագործ ու ժիմի տակ բզիկ բզիկ եղածի, ճխլուածի օրինական ու անխուսափելի բողոքը. ընդհակառակը նա այդ բողոքը խեղդում, նախատում, ցեխոտում է. նա հայհոյանքով, թուքով է ծածկում ծնշուածի, Տկարի յուզիչ ու վեհափառ դէմքը:

Անն թէ ի՞նչու մենք դէմ ենք համիսլամութեան, և նրանց, որ մեզ մեղադրում են թէ կառավարութեան առաջ մահմեդականներին համիսլամական ցոյց տալով վատ դեր ենք կատարում,՝ կը պատասխանենք. «Մենք չենք առաջնորդում ընտելացած, ցեղական կամ կրօնական նկատումներով. համիսլամութիւնը՝ այնպէս ինչպէս արտայայտուած է, մի յետադէմ, անհամբերող, բարբարոս գաղափար է, որ ոտնակոխ է անում մարդկային անբռնաբարելի իրաւունքները: Հետեւաբար մենք՝ իբրեւ մամուլի գործաւորներ՝ չենք կարող հաշտ աչքով նայել համիսլամութեան վրայ, ինչպէս չենք նայում ու է նեղսիրտ, յարձակողական նացիօնալիզմի վրայ: Բաւական է որ մենք հաւատարիմ մնանք առողջ դատողութեան, ճշմարտութեան և արդարութեան, բաւական է որ չմեղանչենք մարդկային ազնիւ սկզբունքների դէմ: Մեզ կարող են մեղադրել որ դաւաճանում ենք Գաղափարին: Այդ է միայն կարեւորը. մնացեալը մեր փոյթն անգամ չէ:»

*
* *

Մեր ընթերցողները ընականաբար պիտի հետաքրքրուին, թէ ի՞նչ դիրք է բռնել «Հէյաթը» հայ-թրքական ընդհարումների վերաբերմամբ:

Թաթարական օրգանի դիրքը կարելի է բնորոշել հետեւեալ կերպով. կոկորդիլոսի արցունքներ է թափում հանդիսատեսների համար, սրտապատառ հերքում է բոլոր կատարուած վայրագութիւնները և գրգռում է մահմեդական ֆանատիկոսութիւնը հրէշաւոր սուտեր տարածելով:

Ինչպէս վերևում ցոյց տուինք, «Հէյաթ» իր անդրանիկ համարում պարտք էր սեպել մոխիր ցանել գլխին հայ-թաթարական ընդհարումների պատճառով: Բայց նրանք, որ ծանօթ են Աղայեվի ուղղութեան, որ յիշում են «Հէյաթ»-ի խմբագրի գրգռիչ խօսքերը. «մենք գայլի բնաւորութիւն ունեցող մահմեդականներս գառնուկի մորթի մէջ մտանք», «մենք կրում ենք ափսոսանքներ, որոնք գործով չեն արտայայտուած, ինչպէս, օրինակ, Սէյֆէդդին—կրօնի սուր» և այլն, պէտք չունեն, որ բացատրենք, թէ իսկապէս ի՞նչ արժէ այդ կեղծաւոր ողբ ու կոծը:

Թաղիեվի լրագիրը՝ Նախիջևանի, Շարուրի և Երևանի գաւառներից տեղական հայ և ռուս թերթերին ուղարկուած բոլոր հեռագիրներն ու թղթակցութիւնները թարգմանաբար առաջ բերելով՝ անխտիր ամենը՝ խմբագրական մի ծանօթութեամբ՝ վերից վար հերքում է: Թաթարական օրգանը մի

սարսափելի բառ ունի, որը ինքնին բաւական է իրականութիւնը երեւակայութեան փոխելու. «Նայ»: Նա սիստեմատիկաբար գրում էր. «Էրմէնի «Մշակ» ղաղէթասը եազիեօր», «Էրմէնի Ն. Օրդըրենէէ» ղաղէթասը եազիեօր», «Էրմէնի «Բագու» ղաղէթասը եազիեօր ևայն»: Որ «Հէյաթը» էրմէնի ածականը կպցրեց յիշատակած լրագրին, պրծաւ. էլ բոլոր հաղորդուած տեղեկութիւնները սո՛ւտ են, զրպարտութիւններ և յերիւրանքներ են: Այնպէս որ Նախիջևանի, Շարուրի և Երեւանի գաւառներում, ամբողջ շաբաթներով խաղացուած արիւնազանդ, շնչահեղձ անող ողբերգութիւնը, ըստ «Հէյաթի», մի առասպել է, քմածին երեւակայութեան մի ծնունդ... սպանուած անքան մարդիկը, թալանուած ու հրդէհի մատնուած անքան տներն ու խանութները, պղծուած անքան եկեղեցիներն ու յափշտակուած սրբութիւնները՝ հէքեաթներ են: Այո, հէքեաթներ, և ուրիշ ոչինչ: Իսկ այն ժամանակ ինչու իրար ետեից ուղարկուեցին գնն. Ալիխանով, իշխան Լուի Նապոլէօնը... «Հէյաթ»-ը երգում պատառ է լինում որ մահմեդականները եկեղեցիներին և սրբութիւններին չեն դիպչի, որովհետեւ իսլամական օրէնքով եկեղեցիները, աւետարանն ու այլևայլ սրբութիւնները նուիրական են: Այսպէս «Հէյաթ» առաջ բերելով «Մշակից» մի թրդթակցութիւն, խմբագրութեան կողմից աւելացնում է.

«Վերոյիշեալ տեղեկութիւնները՝ «Մշակ» հայ լրագրից վերցնելու իսկական պատճառը՝ ոչ թէ այդ տեղեկութիւնների իրաւացի լինելն է, այլ այն՝ որ մեր ընթերցողներին գաղափար տանք թէ մահմեդականների վերաբերմամբ ի՞նչ տեսակ ստութիւններ և զրպարտութիւններ տպւում են: «Մշակ» լրագրի միմիայն ստութեան համար գրած այն լուրը, թէ մահմեդականները՝ եկեղեցիի և ուրիշ սուրբ բաների, ինչպէս, օրինակ, աստուածային խօսք Աւետարանի մասին վատ արարքների մէջ են գտնուել, իհարկէ ոչ մի մահմեդական չի հաւատայ. սրանց բոլորը զրպարտութիւններ են: Մահմեդականը՝ իսլամական կրօնքի տեսակէտով սուրբ եղող եկեղեցու, և մահմեդականների գիրքը համարուող Աւետարանի վերաբերմամբ, Աստուած չանէ, որ լրբութիւններ անէ: Զարմանալին այն է, որ «Մշակ» լրագիրը ստութեան սահմաններից այն աստիճան անցնում է, որ հազար երկու հարիւր մահմեդականը երկու հայի զոհում է: Մարդկանց սրտին թոյնի պէս ազդող այդ տեսակ ստութիւններով արդեօք «մշակականները» երկու ազգութեան մէջ հաշտութիւն և խաղաղութիւն պիտի սերմանեն»:

«Հէյաթ»-ը հայերին հաւատալու առաքինութիւնը չի ունենայ, չի կարող ունենալ, և մենք մեր մտքից անգամ չենք

անցնի պահանջել թաթար լրագրից որ մեզ հաւատայ: Բայց «Հէյաթ»-ը իհարկէ չի կարող կասկածի տակ դնել մի այնպիսի մարդու վկայութիւնը, ինչպէս գինեւալ Ալիխանովն է. միթէ գինեւալ Ալիխանովն անգամ ստում էր, երբ պաշտօնապէս հեռագրում էր, որ Երնջակի Հաղարափրիչի մասունքը, որ մահ-մեղականները յափշտակել էին, բերեցին իրան յանձնեցին և նա՛ ուր որ հարկն է...

Հաշտութեան և խաղաղութեան ծարաւի «Հէյաթ»-ը, տեղական հայ և ուրիշ լրագիրները ստուծիւններ և յերիւրանքներ տպագրելու յանցանքի մէջ մեղադրող «Հէյաթ»-ը, Երեւանից ուղարկուած (?) մի այնպիսի նամակ տպեց, որը գարշելի ստուծիւնների, անխիղճ զրպարտութիւնների, հրէշաւոր յերիւրանքների մի ապշեցուցիչ կոյտ է: Այդ նամակը աւելորդ ենք համարում առաջ բերել, որովհետեւ նրան՝ «Բագու» լրագիրը թարգմանաբար ներկայացրեց արդէն հասարակութեան: Այդ անորակելի գրութեան մէջ Երեւանի հայերը, և մասնաւորապէս բաղաբազուկ պ. Մելիք-Աղամալեան, ամբաստանում են մի շարք ծանր յանցանքների մէջ. իբր թէ հայերը փորձել են մի գեղեցիկ թուրք կնոջ առեւանգել բռնաբարելու նպատակով, բայց կինը իր պատիւը փրկելու համար անձնասպան է եղել, սպանել են բաղամալի թուրք կանանց, ծերունի տղամարդկանց. իբր թէ հայ եկեղեցիների զանգակները՝ իրանց անսովոր զօղանջիւնով, կուռի, յարձակման նշան են տալիս եղել, իբր թէ հայ բանաստեղծներն ու հոգեւորականները գրգռում են հղի հայերին, իբր թէ պ. Մելիք-Աղամալեանը՝ Երեւանի մերձակայքում ունեցած «Ձաղ» գիւղում հայեր է պահելիս հղի մահմեդականներին կոտորելու համար կայլն, կայլն:

Այդ նամակը՝ իր պարունակած ըմբոստացուցիչ ստուծիւններով—որի հրատարակութեան պատճառը չափազանց բացայայտ է, գրգռել մահմեդականներին Կովկասում, Պարսկաստանում և Թիւրքիայում—չէր կարող անուշադիր թողնուել: Ու «Բագու»-ի խմբագրութիւնը գովելի գաղափարն ունեցաւ դիմելու Երեւան, ծանօթ անձանց, և ստուգելու հաղորդուած լուրերի ճշտութիւնը: Երեւանից մի մահմեդական՝ Սուլթանով և մի հայ, երգուեալ հաւատարմատար Մնացականեան, հերքեցին «Հէյաթ»-ի նամակի բովանդակութիւնը. հերքումը տպուեց միայն «Բագու» լրագրում. «Հէյաթ» այնքան ազնուութիւն չունեցաւ, որ հերքմանդիրը տպէր: Ընդհակառակը սպասեց, սպասեց և իր 14-րդ համարում Աղայեվի ստորագրութեան տակ տպեց մի «Բաց նամակ՝ երեւանցի էյն Ալի Սուլթանովին»: Այդ Բաց նամակում Աղայեվ թունդ կերպով նախատում է Սուլթա-

նովին: Պետերբուրգի հեռագրական գործակալութեան: Երեւանի դէպքերի մասին մի հեռագիրը տպելուց յետոյ, «Հէյաթ» առաջ է բերում Սուլթանովի հերքմագիրը, ուր վերջինը իր պատուի, իրեն մահմեդական՝ Ղուրանի և Մարգարէի գերեզմանի անունով երդւում էր որ երևանում այդ տեսակ դէպքեր տեղի չեն ունեցել: Աղայեվ հերքմագրի տակ աւելացնում է հետեւեալ տողերը.

«Այժմ մէկ տեսնենք, թէ դուք և ձեր ընկերակիցը (Մնացակտնեան) ձեր պատիւը իրքանով էք գնահատում, և դուք, Սուլթանով, Մարգարէի գերեզմանը իր աստիճան յարգում էք:»

Եւ այնուհետեւ Պետեր. հեռագրական գործակալութեան յիշեալ հեռագիրը բաղդատում է Երևանի չարաբաստիկ նամակի հետ, եղբակացնդու համար, որ նրանք տարբեր թուական են կրում և բովանդակութեամբ բոլորովին նոյն չեն և հետեալաբար Պետերբուրգի գործակալութեան հեռագիրը «Հէյաթ»-ի նամակից քաղուած չի կարող լինել: Բայց միթէ Աղայեվ՝ այդ բաղդատութիւններով և այլ խաղերով՝ կարողանում է «Հէյաթ»-ի բնամակի ստուծիւնները ճշմարտութեան փոխել: Նա դիտմամ հարցի էութիւնից խուսափում է, և ընկնում է այն կողմնակի խնդրի մէջ, թէ «Հէյաթ»-ի նամակն է եղել հեռագրի աղբիւրը, և գտնում է որ, ոչ: Ու Սուլթանովի դէմ փրփրած՝ Աղայեվ աղաղակում է.

«Այժմ, պ. Սուլթանով, ես իրաւունք ունեմ ձեզ այս հարցումն ուղղելու. ձեր պատիւն ու Մարգարէի գերեզմանը ինչու և ի՞նչ գնով ծախեցիք:

Ի՞նչ բան մղեց ձեզ այդ սուտերին և զրպարտութեան, այդ աստիճան նենգաւորութեան և աննամուսութեան: Մնացաւանովի մի «ես մեռնեմ»-ը, թէ ոչ մի խնջոյքի հրաւիրուելով՝ մահմեդական ինտելիգենտութեան կենացը կարմիր գինի խմելը: Ձեր հեռագիրը (հերքմագիր) մեզ հասնելուն՝ ես էլ ձեզ և ձեր գաղափարակից Մնացակտնովի այս տեսակ մի հեռագիր քաշեցի. «Զրպարտիչները իրանց գոյութեան դրամագլուխ են շինում ստուծիւնն ու զրպարտութիւնը. պատուի և Մարգարէի սրբազան գերեզմանի անունով հրդում ուտելուց առաջ, չպէտք է մոռանալ, որ երդում ուտողը կարող է այն բանով միայն երդուել, որը ունի (այսինքն պատիւ) և որին հաւատում է:»

Մենք չենք կարող ձեզ դէմ լինել: Ձեզ նման հարիւրաւոր ու հարիւրաւոր Սուլթանովներ ոչ միայն «Հէյաթ»-ի այսչափ տեղը գրաւելու, այլ նրա ուշադրութեան անգամ արժանի չեն: Սակայն դէպի «Հէյաթ»-ը թշնամաբար վերաբերուելով նրամահուան վճռապէս աշխատելու, «Հէյաթ»-ը կառավարութեան

առաջ խառնակիչ, ֆնատակար գոյնի տակ ներկայացնելու համար մի մահմեդականի անունը պէտք էր:

«Ամբողջ Կովկասում դուք եղաք, ստոր, ստախոս, զրպարտիչ և մահմեդականութեան դաւաճան, և ձեր պատիւը մէջտեղ նետեցիք. «Հէյաթ»-ը և «Հէյաթ»-ի խմբագիրը զրպարտելու, ներանց վրայ ստուերեններ բառնալու համար ձեզ սեփական անունը ընծայեցիք: «Հէյաթ»-ը իր անհրաժեշտ պարտքը համարեց այդ զրպարտութիւնն ու ստուերենը իր վրայից կատարեալ զգուանքով և զազրանքով դէն շարտել և ձեզ ու ձեզ նմանները ստորութեան և անպատուութեան սիւնին կապելով ժողովուրդին ցոյց տալ, որպէսզի նա ինքը ձեզ դատէ»:

«Հէյաթ» իր կողորդն է պատուում արար աշխարհը համոզելու համար, որ ամեն կողմից նրան զրպարտում են: Եթէ թաթար լրագիրը աչքակապուկ չի խաղում իր ընթերցողների և հանդիսականների առաջ, եթէ նա վստահ է իր անմեղութեան մասին, թող քաջութիւնն ունենայ, իր շուշանէ պատիւը պաշտպանելու համար, դատի քաշել իր զրպարտիչներին...

Տ. Զաւէն